



#### 65. ՃԼԵՐՔԸ

Մի տղա ա ըլլամ, մի մեր ա ունենում: Մերը հիվանդանում ա:  
Տղեն ասում ա.— Ի՞նչ ես ուզում ուտես:  
Դրանք էլ էրկու եզն են ունենում:  
Մերն ասում ա.— Թե եզը կմորթես, միսը կուտես, թե չէ էլ  
զադ չեմ ուտիլ:  
Ասում ա.— Բա չթի վախտն ի՞նչ կանենք:— Թե ասում ա,—  
Աստոծ ըղորմած ա:  
Եղը մորթում ա, մորն ուտացնում:  
Զթի վախտը գալիս ա, ասում ա.— Բա հմի ի՞նչ անեմ, նանի՛:  
Թե ասում ա.— Զուժը սարքե, քե մատաղ, ինձ կլծես:  
Սարքում ա, մորը տանում ա լծում:  
Վարն անելու վախտը թաքավորն ըտի ֆորս անելիս ա ըլլամ:  
Մի դուշ ա սպանում, իրան նոքարին ասում ա.— Հենց խրովե,  
որ էրի ոչ: Նոքարը խրովելիս տենում ա, որ տղեն մորը լծել ա:  
Միսը մտահան ա անում, ուշկը նրանց վրա գծում, էրում ա:  
Թաքավորն ասում ա.— Խի՞ ես էրել:  
Ասում ա.— Թաքավորն ապրած կենա, հլա տես, տղեն մորը  
լծել ա, ուշկս դենն էր, էնա էրեցի:  
Թաքավորն ասում ա.— Գնացեք էն տղին կանչեցեք:  
Կանչում են, գալիս ա կուշտը, ասում ա.— Ըմանչում չե՞ս, խի՞  
ես քու մորը լծել:

Ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, երկու եզն ունեինք, մերս հիվնդացավ, ասավ.— Մինը մորթե: Ծս էլ խաթրիցն էլա ոչ, մորթեցի՝ կերավ, հմի տեհա որ ձմեռը սովիլ տինք, հարզն էլ մի կոնից կարալ շտենք տալ, էնա ինքն ասավ,— ինձ լձե, ես էլ լձեցի:

Թաքավորն ասըմ ա.— Ամոթ ա, ամոթ, մորդ վեր թող, ես մի խամ բուղա ունիմ, թե կարաս սովորեցնես, արի տար լձե:

Տղին հետը տանըմ ա, տենըմ ա՝ ինչ բուղա, մի ըզազիլ բան ա: Դու մի ասիլ թաքավորը կարենալիս չի ըլում սովորեցնես: Աղալ են անըմ ու բռնըմ: Տղեն բերըմ ա տուն, դոմըմը քիվիկ կապըմ, փորիցն էլ, պոզերիցն էլ կապըմ ա իրեք օր, իրեք քշեր սոված պչըմ ա: Բուղեն հնզլ-հնզլ ա ընզնըմ: Ծղնա բերըմ ա մի թաս ջուր ա տալի, մի բուռը խոտ ու էն հալին բերըմ ա եզան հետ լձըմ: Քիչ-քիչ ջուրն էլա շտացնըմ, խոտն էլ, բուղեն սվորըմ ա, կուղը վրեն ա դնըմ ու դոշերը սեացնըմ ա:

Թաքավորն ասըմ ա.— Հլա էն տղին կանչեցեք գա ըստի:

Կանչըմ են, ասըմ ա.— էդ ո՞նց արի, որ սովըցըրի:

Թե.— Դե, էնա սովըցրի էլի:

Դե,— ասըմ ա,— մի ախչիկ ունիմ, արի քի տամ իմ շխարովն էլ հրսանիք կլիս, տար քի կնիկ:

Տղեն դալիս է մորն ասըմ, թե.— Գնա թաքավորի աղջիկն ինձ հմար ուզի:

Մերն ասըմ ա.— Վո՛ւյ, մենք քյասիր ենք, թաքավորը մեզ ախչիկ չի տալ:

Ասըմ ա.— Կտա՛:

Ասըմ ա.— էս պտոստորված շորերով ես գնալ չեմ թաքավորից ախչիկ ուղիլ:

էնա տղեն մոր հմար շորեր ա առնըմ, զուքըմ ա, ըղու ա անըմ: Մերը դնըմ ա, ըմանչըմ ա տուն մտնի, դռանը նստըմ ա:

Գնըմ են թաքավորին ասըմ, թե.— Մի պառավ ա էկել, դոստը նստել:

Ասըմ ա.— Կանչեցեք:

Տուն ա գնըմ, ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, մի բան տիմ ասիլ, հմա ըմանչըմ եմ, թե ասեմ:

Թաքավորն ասըմ ա.— Ըմանչիլ մի, ասա՛:

Ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, իմ տղեն քու ախչիկն ուզըմ ա:

Թե ասըմ ա.— Շատ էլ լավ ա անըմ, ո՛ր օրն ուզըմ ա, թող գա տանի:

Գնում են ախշիկը բերում, ճլերք ա ըլում, գեղնիցը կպչում ա, մնում:

Մերը տղին ասում ա.— էս ի՞նչ ա, որ բերիր:

Տղեն թե.— Բան չկա, ես դրան ճամփու կբերեմ, կհայացնեմ:

Մորն ասում ա.— Դրան հաց ու ջուր շտաս: Եդո ասում ա.— Բանն ո՞վ անի, ասում ա.— Ծս ու դու, թե բա.— Հացն ո՞վ ուտի, թե.— Ծս ու դուն:

Իրանք ուտում են, նրան տալիս չեն: Մի օր, էրկու օր, տհենց կենում ա, մի օր էլ էդ ճլերքը վի ա կենում, իրան տակն ու ղրաղնին ավլում ա, եդ նստում:

Ըրիդունը մերը տղին ասում ա.— Դե դրան մի կտոր հաց տու, մի քիչ էլ ջուր տու:

Տալիս ա, ուտում ա: Էգսի օրը ախշիկը վի ա կենում, տան կեսը ավլում ա, եդ նստում ա:

Պառավը տղին ասում ա:

Տղեն ասում ա.— Դե մի հացի կեսը տու, մին էլ կես ստաքան ջուր տու:

Ախշիկն ասում ա.— Վո՞ւյ, գրողը տանի սրանց, իմ հոր տանն անբան շինիլ ամեն բան էլ ուտեի, սրանց տանը չկելը բան չեմ շինում, ցամաք հաց էլ չեն տալիս:

Եդի օրը վի ա կենում, տունն էլ ա ավլում, դունն էլ: Մերն ուր- խանալով տղի անդաճը բռնում ա:

Տղեն ասում ա.— Դե հմի մեզ հետ բարեբար հաց կտաս:

Դրաէից եդը ախշիկը վեր ա կենում, տուն ու տուրը թամրզում, ջուրն ա գնում, տան բանն անում ա, ղոչաղանում ու շփշփում ա:

Օրի մի օրը թաքավորն ասում ա.— Էն ճլերքին տվինք էն նա- շար տղին, հլա գնանք տենանք ի՞նչ դառավ:

Մի լավ խուրջին ա սարքում (թաքավորն ունի ո՞չ), գնում ա տեսութին: Ախշիկը շփշփալեն գալիս ա հոր ձիու գլուխը բռնում, ուրխանալով հորը վեր ա բերում, տուն տանում: Կեսուրը տանում ա ձին հորըքելու: Դրանք միս են ըլում էփած:

Ախշիկը բերում ա սխտորը տալի հորը, ասում ա.— Կլպե՛, որ ըրիգունը քի հաց տան, թե չէ սրանք քի հաց չեն տալ:

Թաքավորը բեխի տակին ծիծաղում ա, կամանց-կամանց կլպում ա:

Կեսուրը եդ ա գալի, տենում ա թաքավորը սխտոր ա կլպում, ասում ա.— Վո՞ւյ, քոռանամ ես, ախշի էդ խի՞ ես սխտորը խնա- մուն տվել, որ կլպի:

էնա հարսն ընդհան վեր ա ունըմ թե.— Բա չկելը բան չշինե,  
դուք հաց կտա՞ք, ինձ տեխ՞ք:

Կեսուրն էն ա խնամու ըղաքիցը վեր ա ունըմ, ինքն ա կլպըմ:

Հրիգոմնր տղեն էլ գալիս ա, մի լավ քեփ ա սարքըմ, ըոսվոզը  
թաքավորն ուրխանալով գնըմ ա իրան կնգանն ասըմ.— Աչկդ լիս,  
մեր ախիկն էլ էն չի:

Մերն էլ ա ուրխանըմ, գալիս են, նոր տանըմ իրանց տուն,  
թազա քեփ անըմ: Դուն էլ ուրխանաս, քու մուրազին հասնիս:

